

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

---

---

### Միջոցառումներ արտերկրում

- ✓ 2019թ. մարտի 3-6-ը Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Նյու Յորքում (ԱՄՆ) կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 51-րդ նստաշրջանին:

## **Միջոցառումներ Հայաստանի Հանրապետությունում և առցանց**

- ✓ 2020թ. մարտի 4-ին Արմատատի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Վիճակագրական նպատակներով վարչական ռեգիստրների օգտագործման և բարելավման վերաբերյալ գնահատման զեկույց»-ի նախնական տարբերակի քննարկմանը,
- ✓ 2020թ. մարտի 4-5-ը Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի արտագնա նիստին,
- ✓ 2020թ. մարտի 5-ին ՀՀ ՎՊԻՍ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ-ում ԿԶՆ-ի ցուցանիշների իրականացման վերաբերյալ հանդիպմանը,
- ✓ 2020թ. մարտի 6-ին Արմատատի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Դաշյանը և ֆինանսների վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Լ. Ասլանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Տարածքային զարգացման վերաբերյալ սեմինարին,
- ✓ 2020թ. մարտի 9-13-ը Արմատատի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել են ԵԱՏՀ Վիճակագրության գծով խորհրդատվական կոմիտեի Ճյուղային և Սոցիալ-ժողովրդագրական վիճակագրության ենթակոմիտեի առցանց նիստին,
- ✓ 2020թ. մարտի 9-ից ապրիլի 7-ը Արմատատի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի մասնագետ Մ. Դալլաքյանը և տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի մասնագետ Լ. Ավետիսյանը մասնակցել են «Պաշտոնական վիճակագրությունը ԿԶՆ-ի համար» խորագրով առցանց դասընթացին,

- ✓ 2020թ. մարտի 10-ին Արմատատի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը և «Վիճակագրական տվյալների հավաքում» ծրագրի աշխատուժի ընտրանքային հետազոտության տվյալների բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնայանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Իրավական գնահատման գործիքի և երկրի զեկույցի արդյունքների ներկայացում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2020թ. մարտի 11-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումները մշտադիտարկելու, գնահատելու և վերհանված խնդիրներին արձագանքելու կառավարության կարողությունների հզորացում» ծրագրի փակման միջոցառմանը,
- ✓ 2020թ. մարտի 13-ին Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է «Հաղորդակցելով գենդերային վիճակագրությանը» խորագրով վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. մարտի 16-ից ապրիլի 24-ը Արմատատի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետներ Կ. Շահբազյանը և Հ. Ջանլաթյանը, նույն բաժնի ավագ վիճակագիր Ա. Վարդանյանը և երկրորդ կարգի մասնագետ Ա. Սաֆյանը մասնակցել են «Ապրանքների միջազգային առևտրի վիճակագրություն» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2020թ. մարտի 27-ին Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և նույն վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը մասնակցել են «Վիճակագրական և աշխարհատարածական տեղեկատվության ինտեգրում» խորագրով վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. ապրիլի 3-ին Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է «Ոչ մեկին չթողնել COVID-19-ի հետևում – կանխարգելում, արձագանք և վերականգնում» խորագրով վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. ապրիլի 6-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյումժյանը մասնակցել է 2020թ. ռաունդի մարդահամարների կազմակերպման և անցկացման գործողություններին համավարակի ազդեցության, գործողությունների վերաբերյալ հարցերի քննարկման նպատակով Մարդահամարի Ղեկավար խմբի առցանց հանդիպմանը,

- ✓ 2020թ. ապրիլի 6-ից մայիսի 15-ը Արմստատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը և նույն բաժնի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են «Շրջակա միջավայրի տնտեսական հաշիվների համակարգ» խորագրով ներածական առցանց դասընթացին,
- ✓ 2020թ. ապրիլի 13-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է «ԵԱՏՄ-ում ԿԶՆ-ի ձեռքբերումների գնահատում՝ հաշվի առնելով ինտեգրման ազդեցությունը ԿԶՆ ցուցանիշների ձեռքբերման վրա. ստացված արդյունքները» խորագրով տեսակոնֆերանսին,
- ✓ 2020թ. ապրիլի 20-ից հունիսի 9-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը, Արմստատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը, նույն բաժնի մասնագետ Ա. Համբարձումյանը և «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT ծրագրի համակարգող Տ. Գևորգյանը մասնակցել են GOPA կազմակերպության փորձագետ Փերիզ Լեոսթի հետ Skype-ով կայացած ECASTAT ծրագրի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և կյանքի որակի վիճակագրության ցուցանիշների բարելավում» բաղադրիչի շրջանակում քննարկմանը,
- ✓ 2020թ. ապրիլի 22-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է «Ոչ մեկին չթողնել հետևում» խորագրով ԿԶՆ-ի համար վիճակագրության գծով փորձագիտական վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. ապրիլի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմստատի բնապահպանության վիճակագրության բաժնի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության և ԵՄ երկրների Շրջակա միջավայրի վերաբերյալ զեկույցների վեբինար շնորհանդեսներին,
- ✓ 2020թ. ապրիլի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է «ԿԶՆ-ի համար վիճակագրության օգտագործումը ցուցանիշներից դուրս» խորագրով փորձագիտական վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. ապրիլի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, Արմստատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, նույն վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Պետրոսյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ

Լ. Քալանթարյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը, արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը և ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել են «Տվյալների ինտեգրման փորձառության համայնքը» ծրագրի մեկնարկային վեբինար հանդիպմանը,

- ✓ 2020թ. ապրիլի 27-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է «ԿԶՆ-ի ազգային ցուցանիշները և ազգային կամավորական ակնարկները» խորագրով փորձագիտական վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. ապրիլի 27-ին Արմստատի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել է «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության հեռախոսով հարցման վերաբերյալ առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. ապրիլի 28-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է «Տվյալների փոխանցումը և տարածաշրջանային հաշվետվողականությունը» խորագրով ԿԶՆ-ի համար վիճակագրության վերաբերյալ աշխատանքային վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. ապրիլի 28-ին Արմստատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը և ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել են «Տարածաշրջանային տնտեսության զարգացման հեռանկարները. Կովկաս և Կենտրոնական Ասիա» խորագրով զեկույցի առցանց շնորհանդեսին,
- ✓ 2020թ. ապրիլի 29-ին Արմստատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ԿԶ-ի ազգային նորարարական կենտրոնի կողմից իրականացվող «Կրթությունից՝ աշխատանք» ծրագրի «Աշխատիր Հայաստան» ծրագրի տվյալների վերլուծության նպատակով առցանց հարցազրույցին,
- ✓ 2020թ. ապրիլի 30-ին Արմստատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ԿԶՆ-ի ազգային նորարարական կենտրոնի կողմից կազմակերպված Աշխատաշուկայի պահանջարկի մասին նորարարական մեթոդներով անցկացված հետազոտության վերաբերյալ առցանց հարցազրույցին: